

**ԻՐԱՆԱՆԻ ԴՐՈՔ ՄԸ ԵՄ ՎԸ ՔԱՆԴԷ ԼԻԲԱՆԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԷՆ ՆԵՐՍ**

Իսրայելեան բանակը երէկ ակահահարեալով քանդեց սահմանաշիւ «Յիբուրէն» դիրքը, որ ըստ ՄԱԿի մասնագետներուն լիբանանեան սահմանէն ներս կը գտնուէր: Բանակի բանբեր մը ըսաւ, որ «Յիբուրէն»ը ակահահարուեցաւ սահմանին վրայ մեր ուժերու վերադասուորումի շքազիծին մէջ»: Իսրայելացի աշխատակողներ անմիջապէս սկսան սահմանին իսրայելեան կողմը կանուցել զայն փոխարինող դիրք մը:

(ՌՈՅԹԸՐԶ)

# ԱԶՏԱԿ

— ԾՐԱԹԵՐԹ —

**AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE** *أزتاك جريدة يومية سياسية وأدبية - الدوة للسلوة، إيثا درويشيان*

1500 Լ.Ռ. 731Դ. ՏԱՐԻ, ԹԻԻ 65 (20528) ԵՐԵՎԱՆԻ ԹԻ, 30 ՄԱՅԻՍ 2000 10 ԷԶ

**ԼԱՊՈՐԱԹՈՒՄ ՏՈՔԹ. ՇԽՏԻ**

Կը ծանուցանէ բացուող իր նոր բաժանմունքներուն

- IRM
- CT SCAN
- OSTEODENSITOMETRIE total (OSTEOPOROSE)
- GASTROSCOPIE

ժել Էլ Shuyh օրոպրատ, հեռ. 04-71 31 31  
Քամրա, Ուարտի փողոց, հեռ. 01-361 222  
Պրումանա, մայր պողոտայ, հեռ. 04-960327

## ՏՈՂԱՆՑՔ ԵՒ ՓԱՌԱՏՈՆ ԸԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 82ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Հայաստանի անկախութեան 82րդ ամեակին առիթով, Կիրակի, 28 Մայիս 2000ին, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի հրապարակին վրայ տեղի ունեցաւ Մայիսեան փառատօն, հովանավորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա կաթողիկոսի, նախագահութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեանի եւ կապիտակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Երջանային Վարչութեան:



Հ.Մ.Ը.Մ.ի սկառուներու տողացեցը Պ. Համուտի դաշտէն կը հասնի հրապարակ, ուր իրենց կը սպասէր հոծ բազմութիւն մը:

### 76 ՆՈՐԱԳԻՐՆԵՐ ՄԻԱՅԱՆ Հ.Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԱՐՔԵՐՈՒՆ

Կիրակի, 28 Մայիսին, 76 նորագիրներ իրենց դաշնակցականի երգումը տալով միացան Դաշնակցութեան շարքերուն. Պուրճ Համուտի Յակոբ Տէր Մելքոնեան Բատերարանին մէջ:

Օրուն կնքահայրն էր Տիգրան ծինողաշեան, որ իր խօսքը փոխանցելով նորագիրներուն, անդրադարձաւ Դաշնակցականի բարոյական էութիւնը կազմաւորող արժեքներուն եւ իմաստաւոր դաշնակցականի գոհաբերութեան ոգիին:

Կնքահայրը յայտնեց նաեւ, որ Հ. Յ. Դաշնակցութեան անդամ ըլլալը դիրքին չէ եւ կը պահանջէ աշխատանք եւ ճիշդ. Ան աւելցուց, թէ դաշնակցականը իր գործունէութեան ընթացքին պէտք է հաւատարիմ մնալ կուսակցութեան Մրացիին. կանոնգիրին, գործելակերպին եւ որոշումներուն:

Այնուհետեւ, Տիգրան ծինողաշեան նշեց դաշնակցական մարտիկ եւ պետական գործիչ Դրաստամատ Կանաչեանի Դրոյնի անունը իբրեւ դաշնակցական գոհաբերութեան օրինակ:

Նկատի ունենալով, որ երգման արարողութիւնը կը զուգահիշէր Հայաստանի պետականութեան եւ անկախութեան կերտման տարեդարձին ու զօրավար Դրոյնի անխնայութեան նախնիի հողի յանձնումին, նորագիրներու սերունդը կոչուեցաւ «Դրոյն սերունդ»:

Ներկայ էին Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, հայ կաթողիկէ պատրիարքական ընդ. փոխանորդ Մանուէլ եպս. Պարթազեան, երեսփոխան Ժաք Չուխատարեան, Հ.Մ.Ը.Մ.ի Երջանային Վարչութեան ատենապետ Վարդգէս Հայրապետեան, Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Յարութիւն Չեքիճեան, Հ. Յ. Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը, հայկական

Տար. ք. էջ 10

## ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ԶՕՐԱՎԱՐ ԳՐՈՅԻ ԱՃԻԷՆՆԵՐԸ ՅԱՆՁՆՈՒԵՑԱՆ ԻՐ ՊԱՇՏԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀՈՂԻՆ



Զօր. Դրօ իր վերջին հանգիստը կ'առնէ հայրենի հողին վրայ:

Ազգային Հերոս Դրաստամատ Կանաչեանի վերատաշարակաւորութիւնը տեղի ունեցաւ Կիրակի 28 Մայիսին, Բաշ Ապարանի յուշարձանին մօտ: Զօրավար Դրոյնի իրենց վերջին հրաժեշտը տալու համար Բաշ Ապարան եկած էին Հայաստանի նախագահ Արմէն խաչատրեան, վարչապետ Անդրանիկ Մարգարեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ., Ազգային ժողովի պատգամաւորներ, նախարարներ, պաշտօնատար համար Բաշ Ապարան եկած էին Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան, Ապարանի Ս. Բագիլիկ

եկեղեցույ մէջ տեղի ունեցաւ Հոգեհանգստեան արարողութիւնը, հանդիսապետութեամբ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսեանի: Այնուհետեւ Դրոյնի ձեռնադրութիւնը վրայ փոխադրուեցաւ Բաշ Ապարանի յուշարձան: Տար. ք. էջ 9

### ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ՎԱՉԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ 750,000 ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏՈՒՆԱՐ ԿԸ ՆՈՒՐԷ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել մեր ժողովուրդի սիրելի գաւակներուն, որ ազգային բարերար տիար ՎԱՉԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ընդառաջելով Ս. Աթոռայի վեհափառ նախապետին Ն.Ս.Ս.Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ վաճառքին, 750,000 ամերիկեան տոյրի նուիրատուութիւն մը կատարեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան:

Սոյն գումարը ամբողջութեամբ պիտի տրամադրուի Անթիլիասի մայրավանքէն ներս միաբանութեան յատուկ շէնքին եւ անոր կից գտնուող այլ կառուցներու շինութեան ու կահաւորման: Ելնութեան աշխատանքները պիտի սկսին անմիջապէս: Յիշեալ շէնքերը պիտի կոչուին ԵՂԻՇԷ ԵՒ ՍԻՐԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՇԷՆՔ

ԵՒ ՎԱՉԷԻ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՇԷՆՔ

Այս առիթով, վեհափառ նախապետը իր բարձր գնահատելը կը յայտնէ ազգային բարերար Տիար Վաչէ Մանուկեանին, իր կատարած այս իշխանական նուիրատուութեան համար, եւ իրեն, իր ընտանիքին եւ Մանուկեան մէծ ընտանիքի բոլոր անդամներուն կը մաղթէ առատ բարիքներով լեցուն երկար եւ երջանիկ տարիներ:

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

### ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ՎԱՉԷ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՆՈՒՐԷՍՈՒԹԻՒԻՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈՒԼԵՃԻՆ

Հաղորդագրութեամբ մը, Ազգային Եղիշէ Մանուկեան քուլէի ինամակաւորութիւնն ու տնօրէնութիւնը կը յայտնեն, թէ քուլէին բարերար տիար Վաչէ Մանուկեան 300,000 ամերիկեան տոյր նուիրած է վարժարանին: Յիշեալ գումարը ամբողջութեամբ պիտի տրամադրուի դպրոցին համար համակարգիչներու եւ աշակերտական նոր փոխադրակառքերու գնման: Մեծագումար այս նուիրատուութիւնը յայտարարուեցաւ քուլէի հիմնադրութեան 15ամեակին առիթով կազմակերպուած պաշտօնական նաշակերտութիւն ընթացքին:

### ԱԶԳ. ԲԱՐԵՐԱՐ ՎԱՉԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ 100,000 ԱՄ. ՏՈՒՆԱՐ ԿԸ ՆՈՒՐԷ ԵԿԵՂԵՅԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Ընդառաջելով Ն. Ս. Ս. Ս. Արամ Ա. կաթողիկոսի փափաքին, ազգային բարերար տիար Վաչէ Մանուկեան հարուր հագար ամերիկեան տոյր նուիրեց Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին: Սոյն նուիրատուութիւնը վեհափառ Հայրապետ անձնապէս յայտարարեց Ազգային Եղիշէ Մանուկեան քուլէի հիմնադրութեան 15րդ տարեդարձին առիթով տեղի ունեցած ճաշկերպութիւն ընթացքին: Տար. ք. էջ 9

### «ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒԻՆԸ ԱՆԳՆԱՀԱՏԵԼԻ ԴԵՐ ԿԱՏԱՐԱԾ Է ՍՓԻԻՌՔԻ ՄԷՋ ԵՒ ՆՈՅՆԸ Կ'ԸՆԷ ԱՅՍՕՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ»

Արժանթին կատարած իր պաշտօնական այցելութեան ընթացքին, Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան եւ իրեն ընկերակցող պատուիրակները, 18 Մայիս երեկոյան, այցելեցին Արժանթին Մակուտանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան եւ իրեն ընկերակցող պատուիրակները, որ նոյնպէս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հարաւային Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէն տուած յատուկ ընդունելութիւն մը:

Նախարարին կ'ընկերակցէր Արժանթինի մօտ Հայաստանի դեսպան Արայ Վլադիմիր: Ընդունելութեան մասնակցեցան Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարակից կազմակերպութիւններու՝ Հայ Օգնութեան Միութեան, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, Համագրայինի շրջանային ղեկավարութիւններն ու Պ. Այրիկի մասնաճիւղերու պատասխանատուները, Արմենիա Երիտասարդական Միութեան եւ ներկայացուցիչներ, Թեմի Առաջնորդ Տ. Գիսակ Արք. Մուրադեան, ինչպէս նաեւ Ա. Մ. Ընկերակցութեան բարերարներ եւ Համայնքի մտաւորականներ:

Ընդունելութեան նախօրեակին նախարարը, ընկերակցութեամբ արտաքին գործոց նախարարութեան իստանակ Արա Պապեանի ու դեսպան Այվազեանի, առանձին հանդիպում մը ունեցաւ Կեդրոնական Կոմիտէի ու Հայ Դատի Յանձնախումբի հետ, ներկայութեամբ Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ Մարիո Նալպանդեանի: Հանդիպման ընթացքին նախարարը ներկայացուց Հայաստանի ներքին իրավիճակը, արտաքին քաղաքականութեան հիմնախնդիրները, ինչպէս նաեւ անդրադարձաւ իր այցելութեան արդիւնքներուն ու սպասումներուն: Իր կարգին, Դաշնակցութեան շրջանային ղեկավարութիւնը նախարար Օսկանեանի փոխան:

ՅԵՂԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԸ ԸՆԴԱՅՈՒՄԱՆ ԲԱՆԱԿԵՐՈՒՄ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ ՆԱՄԱԿԸ՝ ՆԵՊԻՅ ՊԸՐՐԻԻ

«Լիբանանի Հանրապետութեան Խորհրդարանի նախագահ պարոն Նեպիճ Պրրի

«Թոյլ տուէ՛ք իմ եւ Հայաստանի Ազգային ժողովին անունով խորին երախտագիտութիւն յայտնել ձեզի եւ Լիբանանի խորհրդարանին 11 Մայիսի պատմական բաժանակի ընդունման առիթով, որ կը ծանշնայ եւ կը դատապարտէ Օսմանեան իշխանութիւններու կողմէ 1915ին հայերու նկատմամբ իրագործուած Ցեղասպանութիւնը եւ զօրավիգ կը կանգնի հայկական պահանջատիրութեան: Լիբանանի ժողովուրդը, որ նոյնպէս

ԱՐՄԷՆ ԽԱԶԱՏՐԵԱՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ Տար. ք. էջ 9

### ՄՈՍԿՈՒՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԻՐ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՅՏԵ ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԱՆԻՆ

«Մեծալարգ պարոն Նեպիճ Պրրի, «Մենք մեր երախտագիտութիւնը կը յայտնենք 1915ի Հայկական Ցեղասպանութեան մասին բանաձեւի որդեգրման առիթով: Մոսկուայի մէջ բնակող 200 հազար հայերու անունով, մենք շնորհակալութիւն կը յայտնենք, որ դուք եւ Լիբանանի խորհրդարանի երեսփոխանները դատապարտեցիք անմարդկային այս իրողութիւնը: Մենք լստան ենք, որ լիբանանցի եւ հայ ժողովուրդներու միջեւ բարեկամութիւնը պիտի շարունակուի եւ բարգաւառի երկու ազգերու շահերուն ուղղութեամբ»:

ՄՈՍԿՈՒՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՆՈՒՐԻՔ ԹԵԻԱՆԵԱՆ, ՍԷՅՐԱՆ ԲԱՂԿԻԱՍԱՐԵԱՆ, ՌՈՄԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Տար. ք. էջ 9

### Հ.Յ. Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՈՂՋՈՅՆԻ ԳԻՐԸ՝ ՆԵՊԻՅ ՊԸՐՐԻԻ

Յարգարժան պր. Պրրի, Հայ Ցեղափոխական Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէն կազմակերպութեան բոլոր անդամներուն եւ համակիր զանգուածներուն անունով շնորհակալութեան եւ երախտագիտութեան ջերմ զգացումներ կը փոխանէմ ձեզի, Մայիս 11, 2000ին Լիբանանի խորհրդարանին կողմէ Հայկական Ցեղասպանութեան ի նկատար որդեգրուած բանաձեւին առիթով:

Քսաներորդ դարու առաջին Ցեղասպանութեան հողորդած հայութիւնը երբ որք քրաւ Լիբանանի հողին վրայ, լիբանանցի ազգին ժողովուրդը եղբայրական սիրով եւ վերաբերմունքով ընդունեց մեր ժողովուրդի գաւակները գինունք բաժնեկից դարձնելով իրենց օրունկ հացին ու աշխատանքին: Իրենց կարգին, հայ ժողովուրդի գաւակները, իբրեւ տիրար քաղաքացիներ, իրենց անուկարկ նուիրաբերումով եւ տրեւշակ աշխատելով մասնակից դարձան Լիբանանի վերելքին:

Կը շնորհակալենք Լիբանանի խորհրդարանի արդար եւ քաջ որոշումը, որ կը դատապարտէ 1915ին Օսմանեան իշխանութեան կողմէ հայ ժողովուրդին դէմ գործադրուած Ցեղասպանութիւնը զօրակցելով հայութեան արդար պահանջներուն, նկատելով, որ Հայկական Ցեղասպանութեան միջազգային հասցումը նախապայման է ապագային հաւանական նմանօրինակ յեղինակութեան կանխարգիլումին:

Յարգելի պր. Պրրի, Ձեզի եւ Լիբանանի խորհրդարանի բոլոր անդամներուն կը մաղթենք ուժ, կորով եւ յաջողութիւն, հայրենասիրութեամբ ձեր առաքելութեան մէջ:

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կը գտնուիք երեսփոխանական ընտրութիւններու նախօրեակին: Լիբանանեան կառավարութեան որոշումով իրենց քուէն պիտի կարեւան տալ միայն այն քաղաքացիները, որոնք Ընտրական Քարտ ունին: Բազմաթիւ հայ քաղաքացիներ տակաւին չեն տիրացած իրենց քարտին: Ուրիշներ կորսնցուցած են իրենց քարտը: Այսու կը յայտնենք որ Ընտրական Կեդրոնական Յանձնախումբը ի վիճակի է օգտակար ըլլալու Ընտրական Քարտ ապահովել ուզող հայ քաղաքացիներուն: Քարտ ապահովել ուզող քաղաքացիներուն կը բեղադրենք անյայտ դիմել իրենց շրջանի Հ. Յ. Կապուժըք իրենց հետը ունենալով իրենց իրաւժեք քարտին լուսապատեմը եւ երկու նկար: Ստորեւ կու տանք ցանկը եւ հեռաձայնային թիւերը մեր ակումբներուն: ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆ ԱՎՈՒՄԻՆԻՍԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆ Տար. ք. էջ 10



## ՊԱՂԵՍԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԻՏԻ ՎԵՐՍԿՍԻՆ 3ԱՌԱՋԻԿԱՅ ՔԱՆԻ ՄԸ ՕՐԵՐՈՒՆ

Պաղեստինցի իարձրաստիճան պաշտօնատարները յայտնած են, թէ անցեալ շաբաթ Իսրայէլի կողմէ առկախուած խաղաղութեան բանակցութիւնները՝ իրրեւ լողոք Այսրյորդանանի, եւ կազմակերպման իրտուեթեան դէմ, յառաջիկայ քանի մը օրերուն պիտի վերսկսին:

Սակայն պաշտօնատարները կիրակի օրը ասած են, թէ Իսրայէլ իրանակցութեանց պէտք է նստի նոր գաղափարներով որպէսզի կարելի ըլլայ յառաջդիմութիւն արձանագրել:

Մայիսի սկիզբը, պաղեստինցիները բանակցութիւնները առկախած էին՝ գայրոյթ արտայայտելէ ետք իսրայէլեան քարտէսի մը գծով, որ ըստ իրենց, Այսրյորդանանը պիտի մասնատէ եւ իրաւունքներ Իսրայէլի պիտի կցէ:

Ամերիկացի իրանագնաց Տենիս Ռոս երկու կողմերը հաշտեցուցած էր եւ երկու շաբաթ առաջ, Շուէտի մէջ իրանակցութեանց խորհովակ մը իստեղծ էր:

Սակայն անցեալ շաբաթ, Պարաքի իր իրանագնացները

Շաբ. ք. էջ 10

## ՄՈՍԿՈՒԱ ՊԻՏԻ ՊԱՏԺԷ ԶԵՉԵՆԻՈՅ ՄԷՋ ԲՈԼՈՐ ՕՐԻՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ

Կ'ԸՍԷ ՆԱԽԱԳԱՀ ՓՈՒԹԻՆ

ՄՈՍԿՈՒԱ, 29 (ՌՈՑԹԸՐԶ) - Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փուտինը Երկուշաբթի օրը յայտնեց, թէ Մոսկուա պիտի պատժէ ըրոյր անոնք՝ որոնք օրինազանցութիւններ կատարած են Չեչենիոյ մէջ, ներառեալ՝ ուսուցանակալիները:

Եւրոպական Միութեան բարձրաստիճան պաշտօնատարներու հետ տեսակցութեան մը ետք, Փուտինը խոստացաւ աւելի բաց մտքով մօտենալ անջատողական նահանգին մէջ արձանագրուող դէպքերուն:

Անցեալին Եւրոպական Միութիւնը քննադատած է Չեչենիոյ մէջ ուսուցանող կողմէ կատարուած մարդկային իրաւանց տուճակտումները:

Սիւլթան մէկ պաշտօնատարին համաձայն, Փուտինը յայտնած է, որ գինուորական շուրջ 100 քննիչներ կ'ուսուցանուին մարդկային իրաւանց բռնաբարութիւններու պարագաները:

Փուտինը ասած է նաեւ, որ Մոսկուա պիտի գործակցի միջազգային կազմակերպութիւններու եւ թղթակիցներու հետ, Չեչենիոյ մէջ կազմակերպող «աւելի թափանցիկ» դարձնելու համար: Սակայն ան յստակ դարձուցած է, որ Ռուսիա ոչինչ կ'ընայ կասեցնել՝ այդ շրջանին վրայ հակակշիռ հաստատելու իր ճիշդ երևումը մէջ:

Փորձուցալի վարչապետ Անթոնիո Կուլթերիս, որուն երկիրը Ե. Միութեան ներկայ նախագահն է, թղթակիցներու յայտնեց, որ 15 անդամ հաշուող պլոքը կ'ողջունէ Փուտինի այն հաւատարմութիւնը, թէ Ռուսիա Չեչենիոյ մէջ քաղաքական լուծում մը կ'ուզէ:

### ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՐՔՈՒՄ

Նախապէս, Կրեմլինի մէկ բանբերը հերքած էր ըմբոստներու մէկ տեղեկագիրը, թէ չեչէն գինեալներ ուս 40 գինուոր սպանած են Չեչենիոյ մայրաքաղաք Կրոզնիի մօտ:

Ըմբոստներու բանբեր Մովսատի Ուստուկով կ'ըսէր, որ յայտնած է, թէ գինեալները ուս գինուորներու վրայ անակնկալ յարձակում մը գործած են քանդուած մայրաքաղաքին ծայրամասը գտնուող Ալտի գիւղին մօտ:

Չեչենիոյ հարցերու փոխ բանբեր Քոնստանթին Մաքի եւ բացարձակապէս հերքած է ասիկա՝ ընդգծելով, որ մարդկային գոհեր չեն արձանագրուած:

Միւս կողմէ, ըստ «Իթար - Ռասս» լրատու գործակալութեան, յեռնային Վեստնոս հովիտին մէջ մշուշն ու անձրեւը Երկուշաբթի օրը արգելադրած են հրետանիի հարուածները եւ ըմբոստներ փնտնելու գործողութիւնները դանդաղեցուցած:

Անկախ հարցրեց նաեւ, որ Վրաստանի հետ սահմանի երկայնքին հսկող ուժերը մարապնդուած են արգիլելու համար ըմբոստներու սահմանէն անցքը եւ ուսական այլ շրջաններ մուտքը:

«Իզվեսթիա» թերթը Երկուշաբթի օրուան իր համարին առաջին էջով այդ սահմանը Ռուսիոյ ամենէն վտանգաւորը նկատած է: Անցեալ Օգոստոսին իրաւունքներու սկսումն էր վեր, Ռուսիա աւելի քան 2400 գինուոր կորսրնցուցած է:

ՓՈՒԹԻՆԻ ԸՆՏՐՈՒԹԵՆԷՆ ԵՏԶ ԵՆՂԻ ՌԻՆԵՅՍՏ ԻՐԵՆՑ ԱՌԱՋԻՆ ՎԵԼԱԺՈՂՈՎԻՆ ԱՒԱՐՏԻՆ

## ՌՈՒՍԻՈՅ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԵԿՎԱՐՆԵՐԸ ՈՂՋՈՒՆՆԵՑԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

ՄՈՍԿՈՒԱ, 29 (ՌՈՑԹԸՐԶ) - Ռուսիոյ եւ Եւրոպական Միութեան ղեկավարները Երկուշաբթի օրը ողջունեցին տնտեսական եւ քաղաքական գործակցութեան նոր ժամանակաշրջանը՝ նախագահ Վլադիմիր Փուտինի ընտրուած իրենց առաջին վեհաժողովի աւարտին:

Սակայն Եւրոպական Յանձնաժողովի նախագահ Ռոմանո Փրոտի, յայտնեց, որ Ռուսիա աւելին պէտք է ընէ ստար ներդրումներ գրաւելու համար:

Կրեմլինի մէջ Փուտինի հետ միացեալ մամուլատուլիսի մը ընթացքին, Փրոտի շեշտեց, թէ համոզուած է, որ «խակապէս գործակցութեան նոր ժամանակաշրջան մը կ'սկսի»:

Ան ըսաւ, որ Ռուսիոյ տնտեսութեան բարեկալած վիճակը՝ սղաճի աւելի ցած համեմատութիւններով եւ աւելի սեղմ պիւտոճով, ստեղծած է անհրաժեշտ շրջագիծը՝ նախկին խորհրդային գերպետութեան եւ Ե. Միութեան միջեւ առեւտուրին թափ տալու համար:

Փրոտի ըսաւ, թէ Փուտինի նոր վարչակարգը այժմ պէտք է բարեկարգէ Ռուսիոյ տնտեսութեան թիւերը եւ ստար ներդրողներու համաձայն, այս համեմատութիւնը պիտի բարձրանայ շուրջ 60 առ հարյուրի, մինչ այդ պիտի ընդլայնուի՝ ընդգրկելով կեդրոնա-

կան եւ Արեւելեան Եւրոպայի նախկին խորհրդային երկիրները:

Այս ընդարձակումին գծով Ռուսիոյ մտահոգութիւններուն ակնարկելով, Փրոտի ըսաւ, թէ Մոսկուա շահաւոր դուրս պիտի գայ աւելի ցած տուրքերով միակ շուկայի մը ստեղծումով եւ իրենց եկամուտներով աւելի քան 500 միլիոն սպանողներով:

Փուտին շեշտեց, որ Եւրոպայի օրուան իրանակցութիւնները «չատ չին»,

չատ անկեղծ եւ չատ արդիւնաւէտ» եղած են: Ան ըսաւ, որ Ռուսիա յանձնառու է Ե. Միութեան հետ աւելի սերտ կապերու մշակման՝ բազմաթիւ մարգերու մէջ, ներառեալ ապահովութեան մարգին:

Փորձուցալի վարչապետ Անթոնիո Կուլթերիս, որուն երկիրը Եւրոպական Միութեան ներկայ նախագահն է, մամուլատուլիսին ընթացքին ըսաւ, թէ Ռուսիա

Շաբ. ք. էջ 10

## ՆԱԽԱԳԱՀ ԽԱԹԵՄԻԻ ԴԷՄ ՍԱՀԱՓՈՐՁ ՄԸ ԶԱԽՈՂՈՒԹԵԱՆ ՍԱՏՆՈՒԱԾ Է

Կ'ԸՍԷ ԻՐԱՆԻՑԻ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԱԿԱՆԱԻՐ ԱՆՁՆԱԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

ԹԵՀՐԱՆ, 29 (ՌՈՑԹԸՐԶ) - Իրանցի պահպանողական ականաւոր անձնաւորութեան մը համաձայն, Յեղափոխական Պահակազուլուի գաղտնի սպասարկութեանց սպաներ վերջերս ձախողութեան մատնած են նախագահ Մուհամմադ խաթեմիի դէմ իր թիկնապահներէն մէկուն կողմէ մահափորձ մը:

«Պալան» օրաթերթը Երկուշաբթի օրը, մէջբերեց նախագահական նախկին թեկնածու եւ թերթի հրատարակիչ Ահմատ Թաւաքուլին, որ ուսանողներու ըսած է, թէ դէպքը ցուցանիչ է, որ սպազայ մահափորձեր կարելի չէ անտեսել:

Նախագահին դէմ մահափորձի մը գծով շոտեկներ շրջան կ'ընեն որոշ ժամանակէ մը ի վեր: Սակայն թաւաքուլիի խօսքերը հրապարակու առաջին խոստովանութիւնն են, թէ նման փորձ մը եղած է:

Միւս կողմէ, իրանեան ծայրայեղական ատեան մը Երկուշաբթի օրը հրահանգած է բարեկարգչական ականաւոր թղթակից մը իրանարկել՝ անկախ մամուլին դէմ ճնշումի ծիրէն ներս: Անկախ էմատի տոտին Պաքին ամբաստանած է ազգային ապահովութիւնը վտանգելու, իսլամական սկզբունքները հարցականի տակ ստնելու եւ անձիղ յուրեր հրատարակելու յանցանքով:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ ՎԱՆԱՅ ԶԱՅՆ

Այսօր Երեքշաբթի 30 Մայիս 2000ին  
երեկոյեան ժամը 19:00ին

«ՅՈՒՇԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ»

Նուիրուած՝ Ներսէս Խլուտա վերտեանի  
Լեւոն Պերպեքեանի  
եւ Վարդգէս Տէր Կարապետեանի  
(Ա. մաս կրկնութիւն)

Կը պատրաստէ եւ կը ներկայացնէ  
Սոնիա Քլիլեան

ԱՅՍՍ JEEP ՎԱՃԱՍԱՆԻՇՈՎ ԸԾԵԼԱՆԻՒՆԵՐ

30 \$ ԱՄՍԱԿԱՆ

- 1 տարուան երաշխաւորութիւն
- Վճարման դիւրութիւններ
- Առանց տոկոսի
- Բոլոր տարիքներու յարմար

MERCANTILE TRADING CO.  
TEL : (01) 653082 - 739852

Ա. ԿԱՐԳԻ ՈՉԽԱՐԻ ՔԱՇՔԱՎԱԼ 2.700 L.L.

3.215 L.L.

950 L.L.

1.275 L.L.

4.450 L.L.

5.220 L.L.

2.500 L.L.

Ա. ԿԱՐԳԻ ԺԱՄՊՈՆ 200 ԿՐԱՄ 2.400 L.L.

5.500 L.L.

1.885 L.L.

1.700 L.L.

7.600 L.L.

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ MASTER MALL

ԳՆՈՒՄԻ ԼԱՒԱԳՈՅՆ ԸԱՍՅԷՆ



# ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է ԱՅՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

## Կ'ԸՍԵ ԴԱԻԹ ԼՈՔԵԱՍ

Ստորեւ կու տանք «Հայոց Աշխարհ»ի հարցազրոյցը Հայաստանի Ազգային ժողովի Լ. Յ. Դ. պատգամաւորական խմբակցութեան Երկայացուցիչ Դաւիթ Լոքեանի հետ:

Լոքեան կ'անդրադառնայ կառավարութեան ձեւաւորման ձեւին եւ այդ առնչութեամբ Լ. Յ. Դ.ի կեցուածքին:

ՀԱՐՑՈՒՄ. - Ի՞նչ նկատուեց Ձեր նախարարի թեկնածուութիւն առաջարկելու քեզ:

ՊԱՏԱՍԽԱՆ. - Միանշանակ է. Յ. Դ. նախարարի թեկնածու չի ներկայացրել ո՛չ վարչապետին, ո՛չ հանրապետութեան նախագահին: Բնականաբար, պատասխանատուութեան հարցը լուծուած է մեծամասնութեան կողմից:

Հ. - Իսկ նախագահը:

Պ. - Հանրապետութեան նախագահն արդէն յայտարարել է, որ ինքը պատասխանատու է այս կառավարութեան համար:

Հ. - Այսինքն՝ Ռոյալտ Մառոնիանը որպէս ակն է, ոչ Լ. Յ. Ի.ի ակնդամ:

Պ. - Այո՛, Ռ. Շառոյեանը որպէս անձ է, որի աշխատանքը գնահատուել է դրական եւ կան աշխատանքներ, որ կրտստ են մնացել եւ հրատարակութեան փոխուած են՝ Ողիմպիական խաղեր, 1700ամեակի տօնակատարութիւններ եւ այլն: Կուսակցութիւնը նրա թեկնածուութիւնը չի առաջարկել եւ չի պաշտպանել:

Հ. - Կառավարութիւնը ձեւաւորուել է քաղաքական սկզբունքով, թէ՛ արհեստավարտութեան:

Պ. - Աւելի շատ քաղաքական սկզբունք է գերակայել: Եթէ ուշադիր վերլուծուած ենք «Կայունութիւն»ը եւ Հայաստանի ժողովրդական կուսակցութիւնը երկու նախարարական պաշտօն, Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը, Հայաստանի Համայնագիր կուսակցութիւնը, ԱԺՄՆ նախարարներուն: Սա գուտ քաղաքական բանակցութիւնների արդիւնք պէտք է համարել:

# ԸԱՐՅԱԶՐՈՅՑ ԱՊՈՒԼԵԱԶ ԷԼԶԻՊԵՅԻ ՐԵՏ

«Կողմ»ի թղթակից Օդաննու Մանուչարեան հետեւեալ հարցազրոյցը ունեցած է Ազգրպէճանի նախկին նախագահ ԱպուլՖազ Էլչիպէյի հետ 24 Մայիս 2000ին, Ուաշինգթոնի Ազգային ժողովրդավարական Հիմնարկին մէջ (NDC), ուր Ազգրպէճանի իշխանութիւններու ընդդիմացող ղեկավարներ հաւաքուած են խօսելու ապագայ խորհրդարանական ընտրութիւններուն մասին:

ԱպուլՖազ Էլչիպէյ ունի բացայայտօրէն բըրքանդաստ մօտեցում թէ՛ արտաքին եւ թէ՛ ներքին քաղաքականութեան մէջ: Հարցազրոյցին ընթացքին տողընդմէջ կ'ընդհատուի անոր բըրքանտ կողմնորոշումը եւ բըրքան ոճն ու մտածելակերպը:

Օ.ՎԱՆՆԻ: Մ.ՍԱՆՈՒՉԱՐԵԱՆ: Այսօր NDCի մէջ ձեր խօսքին ընթացքին դուք ակնարկեցիք Լեոնային (Կակոնո) Ղարաբաղի հարցին: Պարոն Կամպարը յստակօրէն Աճեց. որ ինք կողմնակից է Լեոնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ լուծումին: Ի՞նչու համաձայն էք իր հետ:

Ա.ՊՈՒՎ.ՖԱԶ.Է.Լ.ՉԻՊԷ.Յ. - Այո, սենք համաձայն ենք:

Օ.Մ. - Բանակցութիւններուն ներկայ փուլին առաջ կը քաշուի Լեոնային Ղարաբաղի եւ Հայաստանի Մեղրի շրջանի «հողիւնի փոխանակում» գաղափարը: Դուք ի՞նչ կը մտածէք:

Ա.Մ. - Մենք ամբողջովին դէմ ենք այս ծրագրին: Առաջին, փոխանակելու բան չկայ, եւ Ղարաբաղը Ազգրպէճանի ամբողջական մասն է: Եւ սահմաններու փոփոխութիւնը իմաստ չունի, այդպիսի հարց չկայ եւ այս մասին որեւէ քննարկում պիտի չըլլայ: Մենք բոլորին հետ (քաղաքացիներ - «և») հաւասար կը վարուինք. առանց նկատի ունենալու անոց հայ կամ արաբական ըլլալը, եւ չենք կարծիք, որ սահմաններէն դուրս ապրող հայերու ազդեցութիւնը որեւէ դեր պիտի ունենայ: Ազգրպէճանի մէջ բոլոր հայերը ուրիշներու հաւասար ապրեցան: Ամբողջ այս հար-

ցը կը ծագի ոռոսական դրոշմով, եւ այս է պատճառը, որ հայերը չունին իսկական անկախութիւն:

Օ.Մ. - Իմ յաջորդ հարցումներս կը վերաբերին վերջերս Թուրքիա ձեր տուած այցելութեան: Ի՞նչ ձեզի Թուրքիա հրաւիրեց:

Ա.Մ. - Ոչ միայն անհատներ, շարք մը հիմնարկներ ինձի հրաւիրեցին ուղարկած են. ժողովրդավարական հիմնարկը, Լուրասիական հիմնարկը, թուրք մտադրականները, Ազգրպէճան մշակութային կեդրոնը եւ տասնհինգ այլ հասցէներ:

Օ.Մ. - Թուրքիոյ մէջ դուք Աճեցիք, եւ թէ՛ Լեոնային (Կակոնո) Ղարաբաղի հակամարտութիւնը խաղաղ ձեւերով լուծուի. ապա դուք կողմ պիտի ըլլաք ռազմական միջոցներու: Կ'ուզեմ գիտնալ թէ ի՞նչն է, որ անհրաժեշտ կը նկատուի խաղաղ բանակցութիւններուն. արդեօք ժամկետի հարց կ'այ:

Ա.Մ. - Իմ պատասխանս ձեզի, իբրեւ հայ այն է, որ պէտք է դադարեցնել «Կարաբաղ եզրը գործածել, որովհետեւ այդ կը յիշեցնէ Թուրքիոյ կայսերական վիճակը. «Կակոնո» ոռուներն է:

Օ.Մ. - Ամենայնդէպս, միջազգայնօրէն ընդունուած էգր է:

Ա.Մ. - Հարցը կը վերաբերի մեր երկու ազգերուն եւ ոչ՝ միջազգային ... Իմ նկատողութիւնս ունէր միջազգային հիմք, որ կը թելադրէ ճշդել ժամանակ ուժերու դուրս բերման համար. բան մը որ բանակցութեամբ կը ճշդուի: Հակատակ պարագային, երկիրները կը վերապահեն ինքնապաշտպանութեան իրաւունքը:

Հարցում մը ունիմ ձեզի, ինչ կը վերաբերի «Տաղիկ» (Լեոնային) Ղարաբաղի մօտիկութեան. վախճալու եւ վախը տարածելու պատճառով, որովհետեւ հետադարձութեան պատճառով մենք իրենց համար վտանգ չենք: Երբ ասէն ինչ խաղաղ էր այդ շրջանին մէջ 140 հազար հայեր կ'ապրէին. ո՞վ պատճառ եղաւ, որ 70 հազար հայեր հեռանան շրջանէն:

Այդ շրջանին մէջ 5 հալկական քաղաքական խմբակներու կողմէն եւ իրարու հետ անհամաձայն են: Իսկ զլխաւոր խնդիրը ահաբեկչութիւնն է: Կարելի չէ ահաբեկչութեամբ կառուցել ժողովրդավար կառավարութիւններ: Եւ հայ ժողովուրդը կը տատայի այս անհամաձայնութիւններուն պատճառով: Եւ միաժամանակ կը ցախիս իմ ժողովուրդիս եւ Լեոնային Ղարաբաղի ժողովուրդին, հայ ժողովուրդին համար:

Օ.Մ. - Կովկասի կայունութեան դաշինքի գաղափարը ներկայացաւ տարբեր երանգներով. դուք համաձայն էք այդ կառուցիչ իրաւունքներուն:

Ա.Մ. - Մենք դէմ ենք Իրանի մասնակցութեան եւ անոր դրոյն քայլերուն:

Օ.Մ. - Որչէն է որ Ազգրպէճանի մէջ իսլամ արմատականներու կայաններ կան: Երուսթ Պոտանքի գրեց, որ Ազգրպէճանի մէջ կան կայաններ, որոնք կ'օգտագործուին ազգային «մուսախիսիներ» շեշեդիս փոխադրելու եւ նաեւ Լեոնային Ղարաբաղի մէջ պատերազմ պատրաստելու:

Ա.Մ. - Ամբողջովին կը հերքես. այսպիսի բան գոյութիւն չունի. Ազգրպէճանի մէջ մարգոմի վարներ չկան: Եթէ գիտնաս, որ այդ պիսի բան կայ առաջինը կ'ըլլամ, որ դէմ կ'ենլես: Մենք կողմնակից ենք արդիական աշխարհին եւ ոչ այլ բանի, որ պատճառ պիտի ըլլայ ահաբեկչութեան եւ պիտի արգելադրէ ժողովրդավարութիւնը. սենք Ազգրպէճանի մէջ մնա՛նք երեւոյթի պիտի չգորակցինք: Երբ նախագահութիւնը ստանձնեմ պիտի հետեւի, որ այսպիսի բան չպատահի:

Ինչու նաեւ պէտք է Աճեք, որ հակամարտութեան ժամանակ Ֆրանսայի եւ կարգ մը այլ տեղերէ մարդիկ եկան (Ղարաբաղ - «և») եւ միայն անկախութիւնը եւ ահաբեկչութիւնը ներմտեցին, ոչ մէկ այլ բան:

Օ.Մ. - Ծնորհակալութիւն: Ա.Մ. - Ծնորհակալութիւն:

# ԿԵՆՏՐՈՆՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՍՏԵՂԾԵԼ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՅՆՔ

## Եւրոպական քաղաքականութեան հետազոտութիւնների կենտրոնը Հինգշաբթի, Մայիսի 18ին, Պրիւքսէլում հրատարակեց մի հետազոտութիւն - յանձնարարական, որը կոչուում է կովկասեան կայունութեան համաձայնութիւն: Այս հանրայն գիտական կենտրոնը Պայքանեան կայունութեան ծրագրի հեղինակներից մէկն է:

Ընդհանրապէս կովկասի կայունութեան կամ անվտանգութեան ծրագրերը շատ են ներկայացուած վերջերս: Այն առաջարկել էր նախագահ Ռոպէրթ Քոչարեանը, միւսը՝ Թուրքիայի նախկին նախագահ Սիւլէյման Տեմիրլը: Նման առաջարկներ ներկայացրել են Ալիեբեր Ե Եւարտանածէն: Հարաւային կովկասի անվտանգութեան իր բմրունումներն ունի նաեւ Ռուսաստանը:

Եւրոպական հետազոտական կենտրոնի ծրագրի հաւանութեան է արժանացել եւրոպական կառույցների կողմից: Այս ծրագիրն ինչ-որ իմաստով կարելի է բնութագրել իբրեւ Եւրոմիտութեան ծրագիր: Մրցախորն առաջարկում է ստեղծել չիման իտուր, որի կազմում կը մտնեն Հայաստանը, Ազգրպէճանը, Վրաստանը, Թուրքիան, Իրանը, Միացեալ Նահանգները, Եւրոմիտութիւնն ու Ռուսաստանը: Եւրոպական հետազոտութիւնների կենտրոնը չիման իտուրն անուանում է նաեւ կովկասեան մեծ ութնեակ: Ինչպէս է առաջարկում լուծել հակամարտութիւնները Հարաւային կովկասում եւրոպական այս հաստատութիւնը, ինչպիսի կարգավիճակ է նախատեսուած, այսպէս կոչուած, վիճելի տարածքների կամ անջատական ինքնահռչակ հանրապետութիւնների համար: Աւելի քան 40 էջի վրայ շարադրուած Եւրոպական հետազոտական կենտրոնի յանձնարարականի գլխաւոր մտայնացումը Հարաւային կովկասի համայնքի ստեղծումն է: Ընդ որում, այդ համայնքը կարող է ունենալ Եւրոմիտութեան կառույցի տեսք, կարող է նմանուել այլ շրջանային կառույցներին: Ըստ կենտրոնի, Հարաւային կովկասի համայնքը (ՀՀՀ) պէտք է ունենայ նախարարների խորհուրդ, որի կազմում կ'ընդգրկուեն Վրաստանի, Հայաստանի եւ Ազգրպէճանի արտաքին գործերի, պաշտպանութեան, տնտեսութեան եւ ներքին գործերի նախարարները: Կը ստեղծուի նաեւ Հարաւային կովկասի խորհուրդի արտակարգ վեհաժողով՝ 170 պատգամաւորական տեղերով: ՀՀՀ խորհրդարանական վեհաժողովը ընտրուած է ուղղակի ընտրութիւններով: Ընդ որում, ազգային փոքրամասնութիւնները եւ տարածքները յոնչպէս ներկայացուած են վեհաժողովում: Հարաւային կովկասի համայնքի անդամ երկրները այնուհետեւ միացեալ համաձայնագրեր են ստորագրում Եւրոմիտութեան հետ: Ըստ Եւրոպական հետազոտական կենտրոնի, Համայնքը ձուլանաւորուել է Եւրոպական Միութիւնը: Եւրոպական քաղաքականութեան հետազոտական կենտրոնի աշխատակիցները Մայիսի 18ին Պրիւքսէլում տեղի ունեցած ներկայացման ժամանակ յորդորել են Ֆրանսային նախաձեռնել կովկասի կայունութեան համաձայնութեան իրականացումը արժանել Եւրո-

միութեան առաջնահերթ խնդիրներից մէկը: Իսկ ինչու են գիտնականները դիմել Ֆրանսային: Բանն այն է, որ Ֆրանսան այս տարուան երկրորդ կէսից ստանձնում է Եւրոպական Միութեան նախագահութիւնը:

